2711ղ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՕՐԷՆՔՆԵՐԻ ՀԱՒԱՔԱԾՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

1919 ՆՈՅԵՄԲԵՐԻ 28 ԵՐԵՒԱՆ № 5

14250

ՅԱՆԿ.

49. Արտասահմանում մինչև յիսուն միլիոն կարճաձև փոխառութիւն կնքելու մասին.
50. Հայաստանի երկաթուղիներով ճամբորդական տարիֆների մասին.
51. Հայաստանի երկաթուղիներով ապրանք տեղափոխելու տարիֆների մասին.
52. Պատգամաւոր Աւետիք Սահակեանին Պարլամենտի երրորդ խոհ-նախագահ ընտրելու մասին.
53. Հայաստանի երկաթուղու բանւորների ու ծառայողների կազմը հաստատելու եւ մինչև 1919 թ. դեկտեմբերի 31-ը ռոճիկով բաւարարելու համար 31.477.743 ռուբլի վարկ բանալու մասին.
54. Ֆինանսական նախահաշիւների եւ պետական եկեւմտացոյցը կազմելու, ընդունելու եւ հաստատելու մասին.
55. 1919 թ. Սեպտեմբերի 20-ի օրէնքի 6-րդ յօդուածի փոփոխման եւ լրացման մասին.

ՕՐԷՆՔ

49. Արտասահմանում մինչև յիսուն միլիոն կարճաձև փոխառութիւն կնքելու մասին.

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 4-ին.

1.—Ֆինանսների Նախարարը լիազօրւում է միտարւոյ ընթացքում սոյն օրէնքի հաստատելու օրից հաշուած, Արտասահմանում մինչև յիսուն միլիոն դոլլարի անուանական (նոմինալ) արժէքութեամբ կարճաձև փոխառութիւն կնքել Հանրապետութեան համար ձեռնտու պայմաններով, ոչ աւելի քան տասն տոկոսով։

14250

2.—Այդ փոխառութիւնից գոյացած գումարը կառավարութիւնը գործադրելու է, բացառապէս արտաքսմանեան շուկաներում, պատերազմից քայքայուած ազգաբնակութեան կարիքների համար անհրաժեշտ կենսական մթերքներ և Հայաստանի վերաշինութեան համար անհրաժեշտ ապրանքներ գնելու։ Այդ գումարից են հոգացուելու փոխառութեան հետ կապուած բոլոր ծախսերը, որոնք փոխառութեան ընդհանուր գումարի երկու տոկոսից աւելի չպէտք է լինեն։

3.—Այդ փոխառութեան գրամագլուխն ու տոկոսները ապառ են ներկայիս և ապագայի բոլոր տեսակի տուրքերից։

4.—Փոխառութեան պայմանները, որ թոյլատրուած են սոյն օրէնքի 1-ին յօդուածում (շահի տոկոսներ, էմիսիայի միջոցն ու տոկոսը գրամագլխի և շահի վճարման ժամանակամիջոցն ու ձեր) Ֆինանսների Նախարարի առաջադրութեամբ որոշում են Մինիստրների խորհրդում և վաւերացուում Մինիստր-Նախագահի դեկրետով։

5.—Ֆինանսների Նախարարի առաջադրութեամբ և Նախարարների Խորհրդի վաւերացմամբ Նախագահը յատուկ դեկրետով կարող է լիազօրել Ֆինանսների Նախարարին՝ սահմանելու նախարարական կարգադրութեամբ փոխառութեան վերաբերեալ մնացեալ բոլոր պայմանները։

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ս. Տիգրանեան
Աւագ քարտուղար՝ Ց. Տէր Յակոբեան

1919 թ. Նոյեմբերի 5
Երևան։

ՕՐԷՆՔ

50. Հայաստանի երկաթուղիներով ճամբորդական տարիֆների մասին.

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 4-ին

1. Նախկին Անդրկովկասեան երկաթուղիների ճամբորդական տարիֆները բազմապատկուում են 35 անգամ. իսկ 10 ֆունտ բազմի տարիֆները 50 անգամ.

2.—Վերացուում են առանձնակի գինուորականների ապառիկ տեղափոխութիւնները.

3.—Վերացուում է սպաների մատնաւոր զորձերով ցած կարգի տոմսակներով բարձր կարգի վագոններում գնալու իրաւունքը։

4.—Ապառիկ տեղափոխութիւն թոյլատրուում է միմիայն զօրամասերի և զօրախմբերի, նրանց զոյքի և ռազմամթերքի համար, անպայման յատուկ գրաւոր թոյլատրութեամբ համապատասխան կորպուսների, դիվիզիոնների, բրիգադների, վաշտերի, բատալիոնների, թնդանօթային բրիգադների, դիվիզիոնների և առանձին բատարէյների կողմից։ Զինուորական ապրանքների ապառիկ տեղափոխութիւնը թոյլատրուում է միայն գրաւոր առաջարկներով թնդանօթային, պարէնաւորման և ինժենեռական վարչութիւնների կողմից։

5.—Դաղթականների ապառիկ տեղափոխութիւնը կատարուում է միմիայն Խնամատարութեան Նախարարութեան գրաւոր թոյլատրութեամբ։

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ս. Տիգրանեան
Աւագ քարտուղար՝ Ց. Տէր Յակոբեան

1919 թ. Նոյեմբերի 5
Երևան

ՕՐԷՆՔ

51. Հայաստանի երկաթուղիներով ապրանք տեղափոխելու տարիֆների մասին.

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 4-ին.

1. Նախկին Անդրկովկասեան երկաթուղիների №№ 7853 7846 և 7849 տարիֆներում նշանակած ճամբորդական և փոքր արագութեամբ ապրանք տեղափոխելու գները բազմապատկել 50 անգամ։

2. Վերացուում են այն լրացուցիչ վճարները, որոնք ստացուում էին կայարանի ծախքերի, կշռելու համար և ընդհանուր կանոնադրութեան 50 յօդուածով նախատեսուած մշտական պահեստների շէնքերը կատուցելու համար։

3. Փթերով տեղափոխուելիք ապրանքը բարձելու և վագոնից դատարկելու համար ապրանքատիրոջից պահանջուում է 50 կ., հաշուելով այս գումարի մէջ նաև ապրանքը սայլերից մինչև կշեռքը և պահեստից մինչև սայլերը տանելու վարձը։

Ծանօթութիւն. Այս վարձը երկաթուղիների վարչութիւնը կարող է փոփոխել նայած օրուայ աշխատավարձին։

4. Վերացուում են № 784 տարիֆի բաժնում նշանակած բոլոր արտակարգ տարիֆները։

5. Նախկին 117 տարիֆային սխեմաների փոխարէն հաստատուած է 24 սխեմա զանազան դասերի, տարբերութիւնների (դիֆֆերենցիալներ) և երեք հարիւր վերստ տարածութեան գօտիների միջին գները միացնելով, համաձայն սրան կցուած փութի և վերստի գների ապիւսեակի, որի մէջ յաճախ տեղափոխող ապրանքները դասաւորուած են այբուբենական կարգով, մատնանշելով ամեն մի տեսակ դիմաց նրան համապատասխանող դասը. տարբերութիւնը կամ գօտին նոյն ապիւսեակում բերուած են մէկ փութ ապրանք մէկ վերստ տեղափոխելու գները։ Այբուբենական ապիւսեակը պարբերաբար կլրացուի երկաթուղային վարչութեան կողմից։

6. Հաստատուում են հետևեալ լրացուցիչ տուրքերը.

ա. Ամեն մի ապրանքաթղթի (նակլադնոյ բլանկ) համար մի

բ. ռուբլի. Վագոնների և պլատֆորմաների կանգնելու վարձ առաջին օրը (սուտկի) 50 ռուբ. երկրորդ օրը—100 ռուբ., և հետևեալ օրերը 200 ռուբլի։ Վագոնները լցնելու և դատարկելու համար վեց ժամ ժամանակ է տրուում հետևեալ կայարաններում՝ Երևան, Էջմիածին, Արաքս, Ալեքսանդրապոլ, Կարս, Սարիղամիշ, Ղարաքիլիսա, Սանահին, Նախիջևան, Ջուլֆա. իսկ մնացած կայարաններում վագոնը բարձելու համար 6 ժամ է տրուում, դատարկելու համար 12 ժամ՝ հաշուելով ժամանակամիջոցները ընդհանուր կանոնադրութեան 77 յոդուածի օրէնքների համաձայն։

գ. Ճամբորդական արագութեամբ ուղարկուող ապրանքների, բագաժի, և բագաժի ստացականներով տեղափոխուող ապրանքների պահելու համար վճար վերցնել, թոյլատրած ժամանակամիջոցը անցնելուց յետոյ, օրական մէկ ռուբլի ամեն մի կտորի համար։

դ. Մեծ ու փոքր արագութեան ապրանքների պահելու համար վճար վերցնել առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ օրերը փթին 10 կոպ. օրական. վեցերորդ, եօթներորդ և ութերորդ օրերը փթին 20 կոպ. իններորդ, տասներորդ և տասնմէկերորդ օրերը փթին 30 կոպ. տասներկու, տասներեք և տասնչորսերորդ օրերը փթին 50 կոպ. հետևեալ կէս ամսայ ընթացքում օրեկան փթին 75 կոպ. կէս ամիս լրանալուց յետոյ ամեն մի 15 օրուայ համար փթին վերցնել 6 ռուբլի։

ե. Մինչև 200 ռուբլի վերադիր վճարով ապրանքները տեղափոխելու միջնորդութեան վճար վերցնել ամեն մի ռուբ-

լու համար 2 կոպ. 200 ռուբ. մինչև 1000 ռուբլուն մէկ և կէս կոպէկ, բայց 4 ռուբլուց ոչ պակաս. 1000–2000 ռուբլի 1 կոպէկ, բայց ոչ պակաս քան 15 ռուբլի 2000 ռ. բարձր ամեն մի ռուբլուն կէս կոպէկ, բայց ոչ պակաս քան 20 ռուբլի։

զ. Կայարանի հողերը ապրանքով բռնելու համար (ընդհանուր կանոնադրութեամբ 47 յոդուածի համաձայն) վերցնել գ յոդուածում բերուած վճարների կէսը։

է. Ամբողջ վագոնով կամ ամբողջ վագոնի ծաւալի քանակութեամբ տեղափոխուող ապրանքների վագոն լցնելը և դատարկելը թողնուում է ապրանքատէրերի վրայ. երկաթուղու պլոմբով կնքած այդ վագոնների հետ ապրանքատէրը կարող է ուղարկել իր ուղեկցողին գ. կարգի առմտակի վճարով։

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Նոյեմբերի 7
Երևան.

ՈՐՈՇՈՒՄ

52. Պատգամաւոր Աւետիք Սահակեանին Պարլամենտի երրորդ փոխ-Նախագահ ընտրելու մասին.

Պարլամենտը 1919 թ. Նոյեմբերի 6-ի նիստում Պարլամենտի երրորդ փոխ-Նախագահ ընտրեց պատգամաւոր Աւետիք Սահակեանին։

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ս. Տիգրանեան
Աւագ քարտուղար՝ Յ. տէր Յակոբեան

1919 թ. Նոյեմբեր 7
Երևան

ՕՐԷՆՔ

53. Հայաստանի երկաթուղու բանուորների ու ծառայողների կազմը հաստատելու և մինչև 1919 թ. դեկտեմբերի 31-ը ռոճկով բաւարարելու համար 31.477.475 ռուբլի վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 7-ին

1. Հաստատել Հայաստանի Հանրապետութեան երկաթուղու բան-

տարների և պաշտոնեականների կարմր, համաձայն այն օրենքին կցած ցուցակի։

2. Բանալ Ներքին գործերի Նախարարին 22.500.156 ր. վարկ բանտարների և պաշտոնեականների 1919 թ. սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ռոճիկները վճարելու համար, հաշուելով ամսական 5.647.539 ր., որը բաց է թողնում հետևեալ բաժանմունքներին։

1. Երկաթուղու վարչութեանն ու պրոմենտակին	29.700 ր.
2. Երկաթուղու վարչ. գլխաւոր հաշուապահութեան	37.950 ր.
3. Երկաթ. վարչ. նիւթեղէնի բաժնի հաշուապահութեան	14.720 ր.
4. Երկաթ. վարչ. երկաթուղագծի բաժնի հաշուապահութ.	16.570 ր.
5. Երկաթ. վար. երթևեկութեան բաժնի հաշուապահութ.	12.660 ր.
6. Երկաթ. վարչ. շարժողական բաժնի հաշուապահու	15.360 ր.
7. Գլխաւոր գոնձարկղին	10.900 ր.
8. Եկամտային և առևտրական բաժանմունքին	115.750 ր.
9. Բժշկա-տաղջապահական »	87.830 ր.
10. Նիւթեղէնի բաժանմունքին »	65.200 ր.
11. Դատաստանական բաժնին	2. 150 ր.
12. Երկաթուղագծի բաժանմունքին	1.749.770 ր.
13. Երթևեկութեան բաժանմունքին	1.585.540 ր.
14. Շարժողական բաժանմունքին	832.620 ր.
15. Ուղղութեան բաժնին	37.180 ր.
Ընդամենը	4.613. 900 ր.
Վաստակող շրջանների ծառայողներին և բանտարներին 10 % լրացուցիչ	92.383 ր.
Բնակարանային վճարը լրիւ վարձատրութիւն 20 %	941.256 ր.
Ընդամենը	5.647.539 ր.

3. Բանալ Ներքին Գործերի Նախարարին 8.887.589 ր. վարկ երկաթուղու բանտարների և ծառայողների 1919 թ. յունիս, յուլիս և օգոստոս ամիսների հին և նոր ռոճիկների տարբերութիւնը վճարելու համար, հաշուելով ամսական 2.995.868. բուրլի։

Փոխ Նախագահ Գարրամենտի Ս. Տիգրանեան

Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Նոյեմբերի 8
Երևան

ՕՐԷՆՔ

54. Ֆինանսական Նախարարների և պետական Ել-

Եմատայոյցը կարմելու, քննելու և հաստատելու մասին.

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 7-ին

1. 1920 թ. երևմտական տարին հաշուել նոյն տարուայ յունուարի մէկից։
2. Նախարարութիւնների և պետական վերահսկողութեան ելեմտարի նախահաշիւների նախագծերը միաժամանակ ուղարկուում են Ֆինանսների Նախարարութեան եօթն օրինակ և պետական վերահսկողութեան մի օրինակ 1919 թ. Նոյեմբերի 10-ից ոչ ուշ։
3. Գարրամենտի և նրա գիւանի պահպանման համար բացուած վարկերը մտցուում են նախահաշիւ մէջ Նախագահութեան ներկայացրած զուտարների համաձայն։
4. Իւրաքանչիւր Նախարարութեան և պետական վերահսկողութեան նախահաշիւ նախագիծը նախօրօք քննութեան է, առնում նախահաշիւները քննող միջվարչական Յանձնաժողովը, որ կազմուում է համապատասխան Նախարարութեան, Ֆինանսների Նախարարութեան և պետական վերահսկողութեան ներկայացուցիչներից։
5. Յանձնաժողովների անդամների թիւը որոշուում է յիշեալ վարչութիւնների համաձայնութեամբ։
6. Նախահաշիւները քննող միջվարչական յանձնաժողովի նախագահը նշանակուում է Ֆինանսների Նախարարի կողմից։
7. Նախահաշիւային այն ենթագրութիւնները, որոնց մասին տարաձայնութիւն չի ծագում, նախահաշիւները քննող յանձնաժողովի մէջ, համարուում են հաստատութիւն գտած այդ նախարարութեան նախահաշիւ նախագծի մէջ մուծելու համար։
8. Մնացած տարաձայնութիւնների մասին յիշուած երեք վարչութիւնների ներկայացուցիչները զեկուցում են իրենց իշխանութիւններին։ Եթէ վերջիններս չեն համաձայնում, նրանցից իւրաքանչիւրի եզրակացութիւնը կցուում է նախահաշիւ նախագծին։
9. Նախահաշիւային յանձնաժողովի քննած նախահաշիւների նախագծերը տարաձայնութիւն ասած բերող հարցերի մասին մացրած եզրակացութիւնների հետ միասին ուղարկուում են Ֆինանսական Նախարարութեան միջոցով Նախա-

բարների Խորհրդին ոչ ուշ քան 1918 թ. նոյեմբերի 20-ը։

10 Նախարարների Խորհուրդը քննելով նախահաշիւների նախագիծը և լուծելով վիճելի հարցերն ու նախագծին իր հաւանութիւնը տալով, 1919 թ. դեկտեմբերի 1-ից ոչ ուշ, վերադարձնում է Ֆինանսների Նախարարին պետական Եկամտաբերի նախագիծը կազմելու համար։

11. Ֆինանսական Նախարարը Նախարարների խորհրդին է ներկայացնում պետական Եկամտաբերը ոչ ուշ, քան 1919 թ. դեկտեմբերի 15-ը։

12. Նախարարների Խորհրդի կողմից հաւանութիւն գտած պետական Եկամտաբերի նախագիծը հրատարակւում է անմիջապէս և ոչ ուշ, քան 1919 թ. դեկտեմբերի 20-ը առաջարկւում Հայաստանի Պարլամենտի քննութեան։

13. Հայաստանի Պարլամենտի կողմից հաստատուելուց յետոյ պետական Եկամտաբերը հրատարակւում է 10 օրուայ ընթացքում։

Փոխ-Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան

Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Նոյեմբերի 8
Երևան։

ՕՐԷՆՔ

55. 1919 թ. Սեպտեմբերի 20-ի օրէնքի 6-րդ յօդուածի փոփոխման և լրացման մասին.

Հաստատած է 1919 թ. Նոյեմբեր 17-ին,

Ի լրացումն և ի փոփոխումն 1919 թ. Սեպտեմբեր 20-ի օրէնքի 6 րդ յօդուածի՝ կցել հետևեալ ծանօթութիւնը։

Այս յօդուածի սյմբ չի տարածւում այն դէպքերի վերայ, երբ Պարլամենտի անդամը ստանձնում է ժամանակաւոր բնոյթ կրող սր և է մասնագիտական և տրտակարգ դրպմանք կամ յանձնարարութիւն Պարլամենտի թոյլատուութեամբ. իսկ մինչև 20 օր տևող յանձնարարութիւնները Պարլամենտի Նախագահութեան թոյլատուութեամբ։

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան

Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Նոյեմբերի 18
Երևան։

Գլխաւոր խմբագիր Մայր Գրասենյակի Ա. Էջմիածնի.

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL014687